ւում, որ այստեղից մի քանի օրոայ ճանապարհով հեռու է, բայց ես գիտեմ, որ Մըհեն քամուց աւելի արագ է գնում, նա էգուց չէ՝ միւս օրը հօրս մօտ կը լինի:

Մըհեն չէր ասել Մարօին, թէ որտեղի՛ց է գալիս, բայց ես գիտէի, թէ ուր էր գնացել նա եւ որտեղից էր վերադառնում: Նա եկել էր իր արիւնոտ շրթունքով աստուածածինը համբուրելու...: Զարմանալի՜ է, կրօնական զգացմունքը գտնւում է եւ ամենակատաղի եղեռնագործի մէջ...: Բայց միթէ՞ կարելի էր նրան եղեռնագործ համարել...

Մարօի կարգադրութիւնները թէեւ բաւականին հանգստացրին ինձ, բայց ես դարձեալ պնդեցի, թէ մեզ պէտք է շտապել շուտով տուն վերադառնալու: Նա դարձեալ ընդդիմացաւ ինձ:

— Ես չեմ գնայ, մինչեւ ասածս չկատարեմ, ես այս գիշեր պատրաստել էի, բայց...

Հեռուից լսելի եղաւ մի մեղմ երգեցողութեան ձայն, նոյնիսկ եղանակով, որ ես լսել էի այսօր «կաթնաղբիւրիէ ձորում: Մարօն լսելով ձայնը, փոխեց իր խօսքը:

— Այդ «ճգնաւորն» է, որ երգում է, — ասաց նա, — ինչպէ՞ս լաւ երգում է, լսի՛ր, Ֆարհատ:

Եւ իրաւ, գիշերային լռութեան մէջ երգը հիանալի էր: Մարօն երկար ականջ դնելուց յետոյ, հարցրուց.

— Դու գիտե՞ս նա ով է, Ֆարհատ:

— Ես նրան չեմ ճանաչում, այսօր առաջին անգամ տեսայ նրան «կաթնաղբիւրիէ ձորում, եւ նա երգում էր միեւնոյն այս երգը: Իսկ յետոյ երեւցաւ նա իմ քեռի Պետրոսի վրանում:

— Որքա՜ն միամիտ ես, Ֆարհատ:

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ դու չկարողացար ճանաչել քո վաղեմի ընկերին:

— Ո՞վ էր նա:

— Ասլանը:

— Չեմ հաւատում, դու ինձ վրայ ծիծաղում ես, Մարօ:

— Վեր կա՛ց, գնանք, նա մեզ կանչում է. ես հասկանում եմ նրա երգի միտքը, գնանք, մի՛ ուշացիր. նրան մէկ էլ կը տեսնես ու կը հաւատաս: